## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7» ծածկագրով շրջանակային ընթացակարգի գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի

**ք.Երևան, Նալբանդյան 104** | **29-ը ապրիլի 2016թ.**
**ժամը $14^{30}$**

Մասնակցում էին՝
նախագահ /գնահատող հանձնաժողովի ղեկավար /ԳՊ/ԳԱՊ/՝
- ՀՀ ԱԱԾ ՏՆՏՎ պետ, Մ. Ղարաջյանը,

անդամներ.
ա/ գնահատող անձնակազմ /ԳՊ/ԳԱ/.
- ՀՀ ԱԱԾ ՏՆՏՎ 4-րդ բաժնի պետ, Ա. Մկրտչյանը,
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 4-րդ բաժնի, 2-րդ բաժանմունքի պետ, Ռ. Չերքեզյանը,

բ/ բացող անձնակազմ /ԳՊ/ԲԱ/՝
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի ավագ իրավախորհրդատու, Հ. Ավետիսյանը,
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի ինժեներ-տնտեսագետ, Գ. Ղազարյանը,

Հանձնաժողովի քարտուղար /Մհմ/՝
-ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի պետ, Լ. Բաբայանը

### 1. Էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

---

(Մ. Ղարաջյան)

Ընդունել ի գիտություն, որ

ա/ 29.04.2016թ-ին էլեկտրոնային ձևով գնումներ կատարելու նպատակով «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7» ծածկագրով հայտարարված շրջանակային ընթացակարգին էլեկտրոնային հայտեր են ներկայացրել թվով 8 Մասնակից.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Էլեկտրոնային փոստի հասցեները |
|---|---|---|
| 1 | Նարսան ՍՊԸ | narsan1@mail.ru |
| 2 | Տեխնոսնաբ ՍՊԸ | technosnab-99@mail.ru |
| 3 | Սթիլ Կոնցեռն ՍՊԸ | steel.metax.2016@mail.ru |
| 4 | Ֆոտոն ՍՊԸ | ms.foton2014@mail.ru |
| 5 | Գապէքս ՍՊԸ | gapex@gapex.am |
| 6 | ԳԵՊՈՏԱՆԻՔ ՍՊԸ | gepotaniq66@gmail.com |
| 7 | Էլիպս Գրուպ ՍՊԸ | mehrabyan_karen@mail.ru |
| 8 | Արարատցեմենտ ՓԲԸ | marketing@araratcement.am |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

### 2. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

---

(Մ. Ղարաջյան)

2.1 Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան էլեկտրոնային հայտեր՝ փաստաթղթեր, կազմել և ներկայացրել են ներքոհիշյալ Մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ |
|---|---|
| 1 | Նարսան ՍՊԸ |
| 2 | Տեխնոսնաբ ՍՊԸ |
| 3 | Սթիլ Կոնցեռն ՍՊԸ |
| 4 | Գապէքս ՍՊԸ |
| 5 | ԳԵՊՈՏԱՆԻՔ ՍՊԸ |
| 6 | Էլիպս Գրուպ ՍՊԸ |
| 7 | Արարատցեմենտ ՓԲԸ |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**2.2** Ֆոտոն ՍՊԸ-ի կողմից armeps.am համակարգ չի կցվել ոչ մի փաստաթուղթ: Հանձնաժողովը որոշեց մերժել Ֆոտոն ՍՊԸ-ի հայտը:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

### 3.Յուրաքանչյուր Մասնակցի գնային առաջարկը.

---

(Մ. Ղարաջյան)

3.1. Յուրաքանչյուր Մասնակցի կողմից առաջարկված միավորի գները ներկայացված են սույն արձանագրության **N 1 Հավելվածում (կցվում է)**:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

3.2 Ներքոհիշյալ Մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալները, ինչպես նաև դրանց թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են).

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ |
|---|---|
| 1 | Նարսան ՍՊԸ |
| 2 | Սթիլ Կոնցեռն ՍՊԸ |
| 3 | ԳԵՊՈՏԱՆԻՔ ՍՊԸ |
| 4 | Էլիպս Գրուպ ՍՊԸ |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

3.3 **Տեխնոսնաբ ՍՊԸ**-ի կողմից N9 չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկում կան թվաբանական անճշտություններ: Հանձնաժողովը որոշեց մերժել **Տեխնոսնաբ ՍՊԸ**-ի հայտը N9 չափաբաժնի մասով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

3.4 **Գապէքս ՍՊԸ**-ի կողմից N 1 չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկում նշված չէ ապրանքի անվանումը, կան թվաբանական անճշտություններ: Հանձնաժողովը որոշեց մերժել **Գապէքս ՍՊԸ** -ի հայտը N 1 չափաբաժնի մասով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

3.5 **Արարատցեմենտ ՓԲԸ**-ի կողմից N 2 չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկում հրավերով սահմանված կարգով նշված չէ տառերով ընդհանուր գինը, ինչպես նաև չի համապատասխանում համապատասխան գնման առարկայի չափման միավորը: Հանձնաժողովը որոշեց մերժել **Արարատցեմենտ ՓԲԸ**-ի հայտը N 2 չափաբաժնի մասով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**3.6** Հանձնաժողովը NN 5, 6 և 7 չափաբաժինները հայտարարեց չկայացած մասնակիցների կողմից գնային առաջարկներ չներկայացնելու պատճառով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

### 4. Շրջանակային ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու և հայտարարելու մասին.

---

(Մ. Ղարաջյան)

Հիմք ընդունելով Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը.

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5, դեմ՝ 0**

4.1. Հանձնաժողովը շրջանակային ընթացակարգի առաջին, երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած որոշեց և հայտարարեց ըստ չափաբաժինների համաձայն սույն արձանագրության **Հավելված N 2-ի**:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5, դեմ՝ 0**

4.2. Ներքոհիշյալ Մասնակիցների կողմից հայտով ներկայացվել են հայտարարություններ այն մասին, որ իրենց կողմից ներկայացված համապատասխան չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում են **ԵՏՄ անդամ երկրների** արտադրության ապրանքներ.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Չափաբաժինների համարները /ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքների/ |
|---|---|---|
| 1 | Նարսան ՍՊԸ | 8 |
| 2 | Տեխնոսնաբ ՍՊԸ | 10 |
| 3 | Սթիլ Կոնցեռն ՍՊԸ | 8 |
| 4 | ԳԵՊՈՏԱՆԻՔ ՍՊԸ | 8 |
| 5 | Էլիպս Գրուպ ՍՊԸ | 2 |

Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի <բ> պարբերությունը՝ նշված ընկերությունները համապատասխան չափաբաժինների մասերով ունեն մինչև 15% գնային առավելություն:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

4.3. Հաշվի առնելով, որ NN 2, 3, 9 և 10 չափաբաժինների մասերով բավարար գնահատված բոլոր Մասնակիցների գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար պետական բյուջեով 2016թ.-ի նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հայտերի բացման նիստը կասեցվել NN 2, 3, 9 և 10 չափաբաժինների մասերով գնային առաջարկներ ներկայացրած Էլիպս Գրուպ ՍՊԸ-ի և Տեխնոսնաբ ՍՊԸ-ի հետ համապատասխան չափաբաժինների մասերով առաջարկված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

4.4. Հաշվի առնելով, որ ներքոհիշյալ Մասնակիցների կողմից հայտով ներկայացվել են չհիմնավորված ցածր գնային առաջարկներ, ուստի ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ պետք է ներկայացվեն լրացուցիչ հիմնավորումներ: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումներ չներկայացնելու կամ ներկայացրած հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը կմերժի 1-ին տեղը զբաղեցրած Մասնակիցների հայտերն այդ չափաբաժինների մասերով և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացնի հաջորդ տեղը զբաղեցրած Մասնակցին:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Չափաբաժինների համարները /Չհիմնավորված ցածր գնային առաջարկներ/ |
|---|---|---|
| 1 | Նարսան ՍՊԸ | - |
| 2 | Տեխնոսնաբ ՍՊԸ | - |
| 3 | Սթիլ Կոնցեռն ՍՊԸ | - |
| 4 | ԳԵՊՈՏԱՆԻՔ ՍՊԸ | 8 |
| 5 | Էլիպս Գրուպ ՍՊԸ | 4 |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին.**

---

(Մ. Ղարաջյան)

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել NN 2, 3, 9 և 10 չափաբաժինների մասերով գնային առաջարկներ ներկայացրած Էլիպս Գրուպ ՍՊԸ-ի և Տեխնոսնաբ ՍՊԸ -ի առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու նպատակով՝ ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեով 2016 թվականի մայիսի 6-ին ժամը 14:30-ին:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Մ. Ղարաջյան

Անդամներ՝ ____________ Ա. Մկրտչյան

____________ Ռ. Չերքեզյան

____________ Հ.Ավետիսյան

____________ Գ. Ղազարյան

Քարտուղար՝ ____________ Լ Բաբայան